

* * *

Երեմիա Չէլէպի Քէօմլուճեան, ինչպէս Գերյար-
գոյ Հ. Ներսէս վրդ. Ակինեան կը գրէ անոր կեանքին
ու գրական գործունէութեան նուիրուած իր շահեկան
հատորին սկիզբը⁽¹⁾, ինքն իսկ եղած է աղբիւրը իր
կենսագրութեան իր ինքնագիր աշխատութեանց մէջ:
Հայր Ակինեան որքան որ վաղաժամ կը համարի «փորձը
ձեռնարկել գրել ամբողջական կենսագրութիւն մը»,
նկատելով որ Երեմիայի աշխատութիւնները ըստ մա-
սին պահուած են Ս. Յակոբեանց և Վենետիկի Մխի-
թարեանց մատենադարաններուն մէջ և դեռ անմատ-
չելի կը մնան գիտութեան, բայց և այնպէս վերե յի-
շուած իր հատորին մէջ գերազանցապէս յաջողած է
ամփոփել Երեմիայի կենսագրութիւնը ու ներկայացը-
նել անոր գրական վաստակները՝ օգտուելով տպագիր
ու ձեռագիր աղբիւրներէ: Անիկա տուած է տպագիր
աղբիւրներու ցանկը (Անդ, էջ 12-13), յիշած է նաև
ձեռագիր աղբիւրները, որոնց հայթայթման մէջ հա-
մեստ բաժին մը ունեցած է նաև տողերուս գրողը:

Սկիզբէն մեր նպատակն էր Երեմիայի Օրագրու-
քիւնը միայն լոյս ընծայել: Գործիս տպագրութեան
սկսելէն վերջ գաղափար յղացանք իրրե Յաւելուած
անոր կցել Չէլէպի մեր Մատենադարանին մէջ պա-
հուած Թուղթերն և ոտանաւոր գրութիւնները (Ու-
ղերձներ, Գանձեր և Ողբեր), մեծագոյն մասամբ ինք-
նագիր, նկատի ունենալով որ ինչպէս Օրագրութիւնը՝
նոյնպէս և Յաւելուածը կու գան նոր լոյսեր սփռել
Երեմիայի ապրած ժամանակին և իր ու Քէօմլուճեան
գերգաստանի անգամոց կեանքին վրայ: Ո՛ւր էր

(1) Երեմիա Չէլէպի Քէօմլուճեան, Կեանքն և գրական
գործունէութիւնը, Վիեննա, 1933, էջ 11: